ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N3085 - Ա **22 ապրիլի 2009թ.**

ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՊՈՂՈՏԱՅԻ Հ. 194/3 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՎԻԹ ՎԱՉԱԳԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ, ՄԱՐԳԱՐԻՏ ՊԵՏՐՈՍԻ ՆԱՐԻՆՅԱՆԻ, ԶԱՔԱՐ ՊԵՏՐՈՍԻ ՆԱՐԻՆՅԱՆԻ, ԱՍՏՂԻԿ ՊԵՏՐՈՍԻ ՆԱՐԻՆՅԱՆԻ, ՄԱՆՅԱԿ ՊԵՏՐՈՍԻ ՆԱՐԻՆՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Դավիթ Վաչագանի Գրիգորյանի (ծնված 26.04.1956թ.), Մարգարիտ Պետրոսի Նարինյանի (ծնված 23.02.1935թ.), Զաքար Պետրոսի Նարինյանի (ծնված 10.12.1927թ.), Աստղիկ Պետրոսի Նարինյանի (ծնված 18.11.1929թ.), Մանյակ Պետրոսի Նարինյանի (ծնված 17.12.1923թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Արշակունյաց պողոտայի հ.194/3 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 441.75քմ, որից 200քմ մակերեսով հողամասը Դավիթ Վաչագանի Գրիգորյանին, Մարգարիտ Պետրոսի Նարինյանին, Զաքար Պետրոսի Նարինյանին, Աստղիկ Պետրոսի Նարինյանին, Մանյակ Պետրոսի Նարինյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է (վկայական տրված 03.11.1992թ. հ.3316): Օրինական հողամասին կից օգտագործվող 241.75քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1990 թվականը, 16.06.2005թ. ժառանգության իրավունքի վկայագիրը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանման 17.06.2005թ. հ.4220, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 16.04.2009թ. հ.20/2-Ե/243 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 10.04.2009թ. հ.3188 եզրակացությունը, համաձայն որի Արշակունյաց պողոտայի հ.194/3 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Արշակունյաց պողոտայի հ.194/3 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Դավիթ Վաչագանի Գրիգորյանի, Մարգարիտ Պետրոսի Նարինյանի,

Զաքար Պետրոսի Նարինյանի, Աստղիկ Պետրոսի Նարինյանի, Մանյակ Պետրոսի Նարինյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 200քմ մակերեսով հողամասին կից 241.75քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 241.75քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Արշակունյաց պողոտայի հ.194 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Արշակունյաց պողոտայի հ.194/3 տուն>>։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Դավիթ Վաչագանի Գրիգորյանի, Մարգարիտ Պետրոսի Նարինյանի, Զաքար Պետրոսի Նարինյանի, Աստղիկ Պետրոսի Նարինյանի, Մանյակ Պետրոսի Նարինյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Շենգավիթ թաղապետարան:

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ